**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 19-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ**-25/1

«Մեծամոր համայնքի լուսավորություն եվ կանաչապատում» ՀՈԱԿ-ի կարիքների համար հենասյան ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ** N 1: Ընթացակարգի հրավերում տեղի է ունեցել վրիպակ, ինչի արդյունքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

**Փոփոխության նկարագրություն**: Ապրանքի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ. «Հենասյուն՝ պատրաստված երկաթյա խողովակից (d=108մմ), պատի հաստությունը ՝ 3մմ, բարձրությունը՝ 6մ: Հենասյունը պետք է ունենա մեկ թև, այն պետք է լինի երկաթյա խողովակից (d=38մմ), պատի հաստությունը՝ 3մմ թևի երկարությունը՝ 1,5մ, թևի անկյունը 60°: Հենասյան վրա վերևից 50 սմ ներքև՝ եռակցված երկաթյա անկյունակ (40x40x3մմ), որի երկարությունը պետք է լինի 40սմ: Հենասյունը պետք է լինի ներկված մոխրագույն յուղաներկով, տեխափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը»:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 09)
Էլ. փոստ՝ a.tadevosyan@promotion.am
Պատվիրատու՝ «Մեծամոր համայնքի լուսավորություն եվ կանաչապատում» ՀՈԱԿ